

ՀՀ մարզպետի մոտ կայացած խորհրդակցության

24.08. 2020թ.

ք.Վանաձոր

**Մասնակցում էին**

Ա.Մխիթարյանը -մարզպետարանի գլխավոր քարտուղար  
Վ.Խաչատրյանը -մարզպետարանի գլխավոր քարտուղարի տեղակալ  
Ա.Բեջանյանը, Լ.Վարդանյանը, Ռ.Հարությունյանը, Վ.Ղարսայանը, Կ.Աշրաֆյանը, Դ.Ստեփանյանը,  
Ա.Թումանյանը, Ա.Սահակյանը, Հ.Գասպարյանը, Մ.Սարգսյանը, Կ.Ադամյանը, Ս.Գրիգորյանը -  
ստորաբաժանումների ղեկավարներ  
Լ.Ասլանյանը -մարզպետի խորհրդական

**Օրակարգում՝**

1. Նախորդ շաբաթվա ընթացքում կատարված աշխատանքների մասին.  
(Մարզպետարանի գլխավոր քարտուղար՝ Արթուր Մխիթարյան)
2. Նախորդ շաբաթվա ընթացքում կատարված աշխատանքների մասին.  
(Լոռու մարզպետարանի ստորաբաժանումների ղեկավարներ)
3. Այլ հարցեր:

**Հանձնարարվեց**

**1. ՀՀ Լոռու մարզպետարանի գլխավոր քարտուղար Ա.Մխիթարյանին, մարզպետարանի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Կ.Աշրաֆյանին՝**

Անհրաժեշտ հսկողություն սահմանել մարզպետարանի և մարզի համայնքների աշխատակազմերում տարեկան արձակուրդների տրամադրման գործընթացի նկատմամբ:

**2. ՀՀ Լոռու մարզպետարանի ֆինանսական և սոցիալ- տնտեսական զարգացման վարչության պետ Հ.Պապոյանին, մարզպետարանի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Կ.Աշրաֆյանին՝**

1-շաբաթյա ժամկետում ուսումնասիրել սեփական եկամուտների հավաքագրման ցածր մակարդակ ունեցող համայնքները և հրավիրել համայնքների ղեկավարներին, ներկայացնել առաջարկություններ և տալ կոնկրետ հանձնարարականներ՝ սահմանելով ժամկետներ՝ հավաքագրման մակարդակը ապահովելու նպատակով:

**3. ՀՀ Լոռու մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետի պաշտոնակատար Վ.Ղարսայանին՝**

ա/ Շաբաթը 2 անգամ տրամադրել ամբողջական տեղեկատվություն մարզում իրականացվող շինարարական աշխատանքների ընթացքի և խնդիրների վերաբերյալ, ինչպես նաև դրանց լուծման նպատակով ներկայացնել առաջարկություններ:

բ/ Համապատասխան գրությամբ դիմել Մարզահովիտ համայնքի ղեկավարին՝ ֆուտբոլի մարզադաշտի կառուցման ընթացքում ի հայտ եկած խնդիրները լուծելու առաջարկությամբ:

**4. ՀՀ Լոռու մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Ա.Թումանյանին՝**

ա/ Շրջաբերական գրություն ուղարկել մարզի համայնքների ղեկավարներին՝ առաջարկելով միջոցներ ձեռնարկել համայնքներում արտակարգ դեպքերի և բնական աղետների վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում ընթացք տալ:

բ/ Ամենշաբաթյա տեղեկատվություն ներկայացնել մարզում ընթացող բերքահավաքի վերաբերյալ:

**5. ՀՀ Լոռու մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Ռ.Հարությունյանին՝**

Սեպտեմբերի առաջին տասնօրյակում կազմակերպել հանդիպում հանրակրթական դպրոցների տնօրենների հետ, քննարկել ուսումնառության հետ կապված խնդիրները և առաջարկությունները, ինչպես նաև լուծման ուղիները:

 Invalid signature

X 

ԱՆԴՐԵՅ ԴՈՒԿԱՅԱՆ

ԼՈՐՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ա.ԴՈՒԿԱՅԱՆ